

ԱԿԿՈՐ ԶՈՒԴԱՅԵՑՈՒՄԻ ՄԻ ԳՐՈՒԹԻՒՆՆ

ՌՈՒՍ ԱՐՔԱՆԻ ՆԻ ԳԻՆ

Խուս արքունիքի հետ ունեցած Յակոբ Զուղայեցու առնչութեան մասին մինչ այժմ մեզ յայտնի տեղեկութիւնները չեն բղխում անմիջական աղբիւրներից: Կաթողիկոսի մահից շատ յետոյ, 1699 թուին, Սիւնեաց մելիքների անունից Եւրոպա ուղարկուած, մի շարք գրութիւններից քաղում ենք, որ 1678 թուի Էջմիածնի գաղտնի խորհրդակցութեան միջոցին ընտրուած աշխարհական պատուիրակները, պարսկահայերի ազատագրման գործը զլուխ բերելու նպատակով Եւրոպայում կատարելիք շրջադայութեան ընթացքում, պէտք է անցնէին Խուսաստան՝ ցարից աջակցութիւն հայցելու: Խուսաստան դիմելու նպատակով, հայ մելիքները, Յակոբ Զուղայեցու և երեք եկեղեցական պատուիրակների ուղեկցութեամբ անցնում են Լ. Պոլիս, սակայն այստեղից, ինչ ինչ պատճառներից դրդուած, ստիպւում են կրկին դառնալ իրանց երկիրը<sup>\*)</sup>: Փոքր ինչ աւելի ուշ, 1701 թուին, երբ Արևմտեան Եւրոպայի հետ հայ մելիքների սկսած բանակցութիւններն արդէն ծայր էին տուել հիասթափութեան, իսկ միւս կողմից՝ հետզհետէ սկսում էր արմատանալ այն հայեացքը թէ պարսկահայերի փրկութեան խարիսխը պէտք Խուսաստանում որոնել, Խորայէլ Օրին, մելիքների հաւատարմատարը, կցում է վերը բերած վկայութեանը մի նոր յայտարութիւն: 1678 թուին Էջմիածնում ընտրուած աշխարհական պատգամաւորները, պնդում է հայ դիւանազէտը, հայերի աղատագրութեան գործը պէտք է նախ Խուս թաղաւորին յանձնարարէին: այդ խմաստով հայոց ժողովի կողմից կնիքներով վաւեցած ինքնազիր բուդր պէտք է ներկայացնէին մուկովեան կառավարութեանը: Արևմտեան Եւրոպա՝ Հռովմէական կայսրին, հայ պատուիրակները դիմելու էին Մոսկուայում մերժում ստանալու դէպքում միայն<sup>\*\*</sup>): Այստեղ յայտնած միտքը լրացնելու համար է կարծես, որ 1703 թ. 27-ն մայիսի թուակիր մի գրութեան մէջ նոյն մելիքները, շրջելով վաստերի յաջորդականութեան կարգը ընթացիկ դէպքերի սահմանում, գրում են Պետրոս Մեծին: «Մեք գրեր էաք եփրատօրին և լէքտօր վալաթինին, որ աղաչեն առ

<sup>\*)</sup> Эзовъ. «Сношения Петра Великаго съ армянскимъ народомъ», СПБ. 1898, № 6. հմմ. №№ 5 և 44.

<sup>\*\*)</sup> Անդ. № 44.

քո թղրութեղ, նոքա ևս մեր աղջնցն լսած է և քո թղրութեղ դրած է, եթէ նոցա և եթէ մեր աղջնցն լսեր ևս և տոհր ևս յանձդ որ ազատես զմեզ որ լինիք մեծ ուխտիւք հաւատրիմ ծառյք քո բարի հըմնին նիրքն և բարուդ բարի և հակովիդ հակովկա:<sup>\*</sup>)

Ծանրանալով այս վկայութիւնների վրայ մի այլ տեղ, դրանց պատմական ստուգութիւնը ենթարկել էինք կասկածանքի. մի կողմից ի նկատ առնելով այդ ու յարակից ցուցմունքների ընդհանուր յատկութիւնը՝ յերիւրել փաստերը քաղաքական երերուն պայմանների պահանջով, իսկ միւս կողմից մեկնելով ժէ. դարի հայ ոռոսական յարարերութիւնների ընդհանուր բնոյթից, հաւանական չէինք համարել, որ դեռ ևս Յակոբ Զուղայեցու ժամանակ հայերը լուրջ ակնկալութիւններ ունենային մոսկովեան թագաւորութիւնից, ամենից քիչը հաւանական էր թւում մեղ այն, որ հայերը իրանց քաղաքական բաղդը կարող էին առանց արտաքին հարկադրանքի այդքան վաղ կապել բացառապէս Ռուսաստանի հետ. Օրիի այլ պայմաններում տուած ցուցմունքները, ունենալով նրա յետազայ վկայութիւններին հակառակ խմասոր, կարող էին ծառայել որպէս մեր կասկածանքն արդարացնող Արցուցիչ հանգամանքներ միայն:<sup>\*\*)</sup>

Այդ կասկածանքը կարծես խոստանում է փարատել յետնադարեան լատիներէնով գրած մի թուղթ, որ գտանք արտաքին գործոց նախարարութեան Մոսկուայի գլխաւոր դիւանում աշխատելիս միայն վերջերս. բայց և անկախ սրանից՝ այդ գրութիւնը ներկայացնում է խոշոր արժէք, որպէս հայ ոռոսական յարարերութիւններից բղխող մինչ այժմ յայտնի քաղաքական փաստաթղթերից հնագոյնը:

Ամբողջ գրութիւնը, որի փոքր ինչ եղծուած բնադիրն ու մեր ձեռքով կատարուած թարգմանութիւնը բերում ենք ստորե, զետեղուած է հասարակ թղթի մեծադիր մի երեսի վրայ. գրուած է վարժ շղագրով, առանց ոլորազծերի ու զարդագրերի. Թուղթն ուղղած է մոսկովեան ցարին (imperator=կայսր=կեսար=ցար), որի անունը չի յիշւում սակայն. նշանակուած չէ նոյնիսկ գրութեան տեղն ու թուականը. բարեբաղդաբար գրուածը վաւերացրած է կարմրագեղ կնքով, որի մակագրութիւնը՝

«ՅԻ ՔԻ ԾՐՅՅ ՅԿ ԿԹՂԿՍ ԱՄ ՀՅ ՅՅ. ԹՎ. ՌՃԴ. 1655, տալիս միայն խնդրաբկուի կաթողիկոսութեան

\*.) Անդ. № 98.

\*\*) Հմմ. մեր. «Israel Ory und die armenische Befreiungsidee». München 1914, եր. 59<sup>րդ</sup> հետ., 83 եւ հետ.

առաջին տարին ու կազ չունի գրութեան ժամանակի հետո կարելի է ենթադրել, որ մեր ձեռքը հասած թուղթը հայերէն բնագրի հետ ուղարկուած թարգմանութիւնն է. հակառակ դէպրում նա աւելի պատշաճ ձև կունենար. հաւանական է նաև այն, որ այդ թարգմանութիւնը պատրաստած լինի այն կաթոլիկ քարոզիչների ձեռքով, որոնց հետ սերտ առնչութիւն ունէր Յակոբ Զուղայեցին 1670-ական թուերին։ Այդ ժամանակաշրջանում եւրոպական արքունիքների հետ հայերի քաղաքական վիճակի բարւոքման խնդրի շուրջը բանակցել կամ թղթակցել է նա մի քանի անգամ,<sup>\*</sup>) աշքի առաջ ունենալով այդ մասին մեզ մատչելի բոլոր գրական յիշատակութիւնները, մենք հնարաւորութիւն չունենք. յինուելով դրանց վրայ, որոշել պատմական այն վայրկեանն, եթր Յակոբ կաթողիկոսը կարող էր անհրաժեշտ նկատել կամ հնարաւորութիւն ստանալ ուստ կառավարութեանը դիմելու։ Դուցէ կարելի լինէր նոյնացնել այդ գրութիւնն այն կնքուած թղթի հետ, որի մասին յիշում է Օրին, եթէ իր համեստ քաղաքական ակնկալութիւններով նա Էջմիածնում մշակած ծանրակշիռ քաղաքական ծրագրից տարբեր իմաստ չունենար։ Արդէն իսկ ստուգուած պէտք է համարել, որ Էջմիածնի խորհրդակցութեանը ժամանակցող մելիքներն ու նրանց ցուցմունքով գործող կաթողիկոսը պարսկահայերի քաղաքական ազատագրումն ամենից առաջ կապում էին հայ-վրացական ապստամբութեան և այդ ապստամբիւնը զեկավարող կաթոլիկ Եւրոպայի աջակցութեան հետ։ Եթէ սակայն ըստ էութեան քննելու լինենք մեզ հասած գրութիւնը, կը տեսնենք, որ այստեղ քաղաքական ձգտումներն այդքան հեռու չեն հանում։ Յիշատակելով այն նիւթական ու բարոյական զրկանքները, որոնց ենթարկում են Պարսկաստանի հայերը, կաթողիկոսն աղերսում է ցարին՝ ի նպաստ վիրջինների իր զեսպանների բերանով միջնորդել պարսից մօտ. գնահատելով պարսից կառավարութեան վրայ ունեցած ուստ դիւանազէտների աղեցութիւնը՝ կաթողիկոսը յոյս ունի թէ նրանց միջնորդութիւնը կարող է բարերար հետևողներով անորագառնալ հայոց վիճակի վրայ։ Եւ միայն այսքանը։ Ինքնին դժուար էլ է ենթադրել թէ 1678 թուին, ծրագրած ապստամբութեան նախօրեակին, հայերը յոյս կարող էին դնել դիւանագիտական աղեցութեան վրայ։ Նշանակում է, ներկայ դիմումը արուած պէտք է լինի այդ ժամանակից աւելի վաղ։ Ի գէպ. Էջմիածնում կայացած խորհրդակցութեան թուականը ևս կարօտ է ստուգութեան։ Էջմիածնի խորհրդակցութեան մէջ արծարծուած քաղաքական ծրագրի հիմ-

\*.) Հմմ. անդ. եր. 43 եւ հետ.

նական մտքերին հանդիպում ենք դեռ Հ. Պետրոս Բեղիկի աշխատութեան մէջ, որ լոյս տեսաւ Վիեննայում 1678 թուին\*), Պարսկաստանից Հ. Բեղիկը մեկնած պէտք է լինի դեռ 1676 թուին. Վիեննայում հանդիպում ենք նրան յամենայն դէպս դեռ 1677 թուին. Մի ուրիշ ժամանակակից՝ Իիլօ, գտնուելով 1678 թուին Հռոմում, լսել էր կաթողիկոսի զինաւորութեամբ Եւրոպա մեկնող հայ պատուիրակների վերաբերմամբ ողջ Եկեղեցական Պետութեան մէջ այդ ժամանակ առգեն տարածուած լուրի մասին,\*\*) Աւելի կարեոր են սակայն Յակոբ Զուղայեցուն վերաբերող այն մի քանի հակիրճ տողերը, որ գտնում ենք Զաքարիա Ազուլեցու օրագրութեան մէջ. «Թիֆին ՌձիԶ (1677) յունիսի մէջ Երևան(ի)... Խանիցն փախաւ գնաց վրացտուն»\*\*\*)... «1128 (1679) ունի Էջմիածնայ Միքայէլ աթոռակալ վարդապետն եկաւ Գողթան տունն նվիրակ, այս դ՝ ամ է, որ Էջմիածնայ նվիրակ չէր եկած. քանզի Յակոբ կաթողիկոսն այս բ՝ ամ է, որ Էջմիածնայ Սէֆի-ղուլի-խանի ձեռացն փախաւ գնաց վրացտուն, վրացտան վերայ գնաց խորմացտուն»†) Էջմիածնի խորհրդակցութիւնը պէտք է որ տեղի ունեցած լինի կաթողիկոսի Վրաստան մեկնելուց անմիջապէս առաջ. նշանակում է ոչ ուժ բան 1677 թուի յունիսի մեկը. Վրաց իշխանաւորների հետ համերաշխ գործակցութեան ծրադիր մշակելու †\*) այլ և Էջմիածնի պարտքերը վճարելու մասին հոգ տանելու նպատակով կաթողիկոսը մի առ ժամանակ պէտք է որ մնացած լինի Թիֆլիզում, †\*\*) Հաւանական է, որ հայ պատուիրակները Թիւրքիայի ներքին նահանգներում ես ուշացած լինեն, քան որ, ինչպէս զո՞նէ Զամշեանն է վկայում, կաթողիկոսը կ. Պոլիս հասաւ միայն 1679 թուի դեկտեմբերին, †\*\*\*) Ի Եզեկանի հրատարակած ժողովածուի մէջ մի քանի անգամ հանդիպող այն վկայութիւնը բէ Էջմիածնի

\* ) P. Petrus Bedik, «Cehil Sutuna» եր. 54 և եւ հետ. 552 և հետ.

\*\*) M-r le Chevalier Ricant «Histoire de l'Etat present de l'Eglise Greque et l'Eglise Armenienne» (trad. de l'angl.) Middelbourg 1692, p. 422.

\*\*\*) «Զաքարիա Ազուլեցու օրագրութիւնը» եր. 64, Ժէ զարիցարդ չը հրատարակուած. ժամանակագրութիւն այս գործը սիրավել կերպով մեր տրամադրութեան տակ դրեց ար. Լ. Ըն:

†) Անդ. եր. 75.

†\*) ԹՅօՅՅ, անդ, № Ա 42, + 20.

†\*\*) «Եւ կացեալ ամիդ տռուր ինչ, եւ սակաւ ինչ վճարեաց ի պարտուցն», Զաքարեայ Սարկաւագ. «Պատմագրութիւն», Վաղարշապատ 4870, Բ. 94.

†\*\*\*) Զամշեան. «Պատմութիւն Հայոց», Գ. 748.

խորհրդակցութիւնը կայացել է 1678 թուին. թւում է թէ ելնում է ծօտ քառորդ դար յիտոյ փաստն արձանագրող մի ընդհանուր աղբիւրից. ուստի և չի կարող նա լինել միանգամայն վատահելի:

Ի՞նչպէս էլ սակայն սահմանելու լինենք ներկայ զըռւթեան հանդէս զալու ժամանակը, նրա պատմական բովանդակութիւնը հազիւ թէ կարող է տեղիք տալ տարակուսանքի. Նա նորից առիթ է տալիս մեզ պնդելու այն կարծիքի վրայ թէ Ժէ գարում շնայկական հարցին մասին վճռական խօսքը դեռ չէր պատկանում մուկովեան ցարին. Հայաստանի քաղաքագէտները կարող էին մտածել ուս դիւանագէտների բարեացակամ միջնորդութիւնների մասին միայն: Հայ մեսիանական զաղափարը դեռ չէր թեակոխիւ զարգացման այն օրհասական շրջանը, որտեղ հիւսիսից արշաւող ծիրանաւորը հմայում է անձկութեան մէջ դեղբող հոգիները որպէս մի նոր ֆրկիւ:

(Մ. Գ. Ա. Մ. Ի. Դ. Ճելա արմանք. 1724. մարտ 12.

№ 2. լ. 6—7.)

Invictissime Imperator

Post humiliatas pedibus Magestatis Vestrae Serenissimae inclinationes, post innumeras ad Deum optimum maximum pro incolumitate Regiae Vestrae personae orationes, pro quiete foelicitate nec non victiarum continuatione totius Regni prae res, pro destructione eversione et totali proflagatione inimicorum Crucis ad Deum ab eclesia nostrae armena sup(p)licationes fusas, Imperatoriae Serenitati nec non consuetae erga extraneos sed tamen domesticos fidei benignitati confidens supplex accedo et quemadmodum potentissimi Imperatores Mosquovitarum Ruthenorum et omnes se ipsos fidei defensores et propugnatores monstavunt semper, nec non protectores afflictorum contra tirannidem adversariorum ita nunc Sua Magestas horumque heroum successor legitimus tam in victibus quam s(c)epto solita Sua clementia dignetur nobis miseris opitulari. En in Persia nostris eclesique neb noc eius ministris vectigalia exotica imponuntur et ob solutiones nostrae tenuitati et paupertati

impossibles nostri ad carceres trahuntur vexantur excruciantur, denique quod ultima et praecipua mahometanorum est intentio ad ritum illorum compelluntur. Si tota persecutionis in opes et mundanas facultates duntaxat vergerat esset tolerabile malum legent tacerem sed cum videam singularis diebus filios nostros in Cristo lactentos ab uberribus eripi invenes delusos in rate protrahi pubertate et aetate dociatos per vim ad ritum saluti aeternae contrarium compelli, tantam stragem nequiens tolerare, ex post lacrimas ad Deum fusas en ad imaginem ipsius et loco tenentem in Suis Regnis accedo Imperatoriam videlicet Magestatem Vestram, et dignetur nobis misere opp(r)essis opitalari, et eo tempore quo Sua Magestas potentissima legatos apud persas emiserit aliquod verbum in nostrum fautrem patrimonium et eundem.... in suis diplomatibus Regiis jubeat ir(r)iseri. Ruthenica potestas plurimum valet in animis persarum, neque forsam deinceps audebunt tantopere vexare, quos resciverint ratione communis in Cristum Deum fidei ad Vos spectare. En tota nostra gemens eclesia armena pedibus Vestrae Magestatis Imperatori pro voluta hasce humillimas supplicationes fundit nec non ego gratia Dei huinsce in Cristo servus.

Imperatoriae Magestati stodictissimus et obsequentissimus humillimus servus

(L. S.)

(Հասցէ)

Potentissimo invictissimoque mosquovitar. Ruthenorum nec non aliarum populorum Imperatori Serenissimo.

### Անյաղթ Կայսր

Խոնարհուելով առ ոսս Զերդ Օգոստավառ Մեծութեան, ուղղելով զեպի Ամենաբարձրեալն անթիւ մաղթանքներ Զեր թագաւորական անձի ողջութեան "Համար և հայ եկեղեցու աղերսանքները բովանդակ թագաւորութեանդ անդորր երջանկութեան և ներկայիս անսպառ յաղթութիւնների. խաչի թշնամիների տառալման, խորտակման և բնաջնջման համար, վստահ լինելով

Կայսերական Օգոստափառութեանդ թէ դէպի օտարները և թէ դէպի անայիններն ունեցած հաստատ ողորմածութեան վրայ՝ (Զեզ) եմ մօտենում ծնկաչոք։ Եւ ինչպէս Մոսկովիեան Ռուսաստանի բոլոր ամենազօր Կայսրները միշտ հանդիսացել են պաշտպան և զօրավիրութ հաւատի այլ և թշնամինների բանութեան հանդէպ՝ հովանի ճնշուածների, նոյնպէս և վայել է Նորին Մեծութեանը, այդ իսկ հերոսների յաջորդին՝ թէ կեանքում և թէ զահի վրայ, օգնութեան հասնել մեզ՝ խեղճերիս

Պարսկաստանում մեզ և մեր եկեղեցու վրայ պարսից պաշտօնեանների կողմից զրում են ահա օտարութ հարկեր և մեզ, որ չենք կարողանում մեր չքաւորութեան և աղքատութեան շնորհիւ հասուցանել այդ հարկերը, քշում են դէպի բանդ, չարչարում են, տանջում և վերջապէս, որ յետինն է ու գլխաւորը մահմետականների նպատակների՝ իրանց դաւանանքն են հարկադրում ընդունել։ Եթէ այդչափ հալածանքները զրկէին մեզ միայն հարսութիւնից և աշխարհային ստացուածքներից, չարիքը փոքր կը լինէր, և ես լուսթեան կը տայի այդ բայց երբ տեսնում եմ օր օրի վրայ մեր ի Քրիստոս մնաւող զաւակները հեռացած (մայրական) ստինքներից, խարուած պատանիները նաև հեռանալիս, չափահաններին և դիտակցութեան եկածներին ուժով մղուած դէպի յաւիտենական փրկութեան հակառակ զաւանանքը, չը կարողանալով տանել այդքան մեծ կորուսոք, ահա, արցունքներ թափելով առ Աստուած՝ Նրա պատկերի տռաջ, մօռնում եմ նաև իւր թագաւորութեան մէջ Նրա տեղապահ Կայսեր, Զերդ Մեծութեանը, որպէս զի բարեհաճէ օգնել մեզ, խեղճութիւնից ճնշուածներիս, և երբ Նորին ամենազօր Մեծութիւնը պարսիկների մատ դեսպաններ ուղարկելու լինի՝ մի քանի խօսք (ասել) ի պաշտպանութիւն մեր ստացուածքի այլ և . . . . . իւր թագաւորական դիւանողէտներին հրամայէ աղղել։ Խուս իշխանութիւնը մեծ նշանակութիւն ունի պարսիկների աշքում և զուցէ առաջիկայում հաւակնութիւն չունենան այնքան տանջել նրանց, որ ի Քրիստոս Աստուածն ունեցած ընդհանուր հաւատի շնորհիւ, կարող կը լինեն Զեզ ուղղել իրանց հայեացքը։ Որպէս իր սեան զարդի՝ բովանդակ հայ եկեղեցին, ինչպէս նաև ես՝ այդ եկեղեցու սպասաւորն ի Քրիստոս, այս ամենախոնարհ ինդիրն արկանում ենք առ ոսս Զերդ Կայսերական Մեծութեան Կայսերական Մեծութեան ամենահաւատարիմ, ամենահազարդ և ամենախոնարհ ծառայ

(Տ. կ.)

Առ ամենազօր և անյաղթ մոսկովիեան ուստաց և այլ ժողովրդոց Օգոստափառ Կայսր։

Յ. Յովեաննիսեան.